Ն. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒԿՐԱՅՆԱՅՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937

9(47.7)
К-78
650
Кнерр Ирвинг Дж.
Дипломатия США –
фашр. Ирвинг Кнерр

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 4 ՀԵՌԱԿԱ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

9(47.7)
Ռ 78

Ն. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

ՍՏԱՑՎԱԾ Է 1981 թ.

Ա 329859

70466

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒԿՐԱՅՆԱՅՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

(Ոժանդակ նյութեր հեռակայողներին)

ՀԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937

3232

Պատ. խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Թարգմ. Մ. ՉԱՐԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Ս. ՇԱԼՋՅԱՆ

Գիտության տպարան
Գլավլիտ № 2245
Պատվեր № 31
Տիրաժ 1000

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՆ ՈՒԿՐԱՅՆԱՅՈՒՄ XVII ԴԱՐՈՒՄ

1

XII—XIII դարերում Ուկրայնայի հողերում—Կիևի, Գալիցիա—Վոլինիայի, Չերնիգովի իշխանություններում—տեղի յեր ունենում ֆեոդալական մանրատման, քայքայվելու և ֆեոդալական մանր առանձնացած տիրապետությունների վերածվելու արագ պրոցես։ Այս հողերը հարևան, ավելի ուժեղ ֆեոդալական կազմակերպությունների պայքարի ասպարեզ դարձնելը յերկար ժամանակ այստեղ ամրացրեց փոշիացած վիճակ։

XIV դարի կեսերին ուկրայնական հողերը ցրվեցին և ձեռքից ձեռք ընկան յենթարկվելով առանձին արտաքին քաղաքական կենտրոնների. Լեհաստանը գրավեց Գալիցիան և Արևմտյան Վոլինը. Լիտվայի իշխանության տակ ընկավ Վոլինի մնացած մասը, Պոդոլիան, Բերեստյան հողը. Վոսկե Հորդային անմիջականորեն յենթարկվում եյին Կիևի հողը, Պերեյասլավշչինան, Պուտիվլը և Կուրսկը, իսկ Մոսկվայի մեծ իշխանությունը դեպի իրեն քաշեց չերնիգովյան հողերի մի մասը։ Միայն XIV դարի վերջին, Ոլգեռդի իշխանության ժամանակ, տեղի յեն ունենում այս հողերի համախմբում (բացառությամբ Լեհաստանի գրաված-ներից) Լիտվայի իշխանության ներքո. 1362 թվին Կիևը յենթակա յեր Լիտվային, XIV դարի 70—80-ական թվականներին Լիտվային յենթակա եյին Դնեպրից արևելք ընկած հողերը։ Բայց Լիտվայի իշխանության տակն եկ այս հողերը պահպանեցին իրենց ներքին առանձնացածությունն ու քաղաքական առանձին կազմակերպությունը, վորը միայն XVI դարի յերկրորդ կեսին փորձում եյին վերացնել վարչական ռեֆորմներով։

Մինչդեռ բուն լիտվական իշխանության մեջ XIV դարի վերջում տեղի յեն ունենում բավականաչափ փոփոխություններ։ 1386 թվին տեղի ունեցավ լեհական թագուհի Յադվիգի և լիտվական մեծ իշխան Յագայլի ամուսնությունը՝ 1385 թվին

Կրեվո ավանում կնքված ունիայի հիման վրա։ Այս ունիան ըստ կիզը դրեց Լիտվայի միավորմանը Լեհաստանի հետ, որը իրականացվում էր հոգուտ Լիտվայի և Լեհաստանի ֆեոդալական վերնախավի՝ վերջինիս բացահայտ գերակշռությամբ։ Ուկրայնական հողերին պաշտոնեական, ստորադաս դեր էր հատկացված այս միության մեջ. նրանք հարկադրված եղին մասնակցելու լեհ-լիտվական արշավանքներին հյուսիս-արևմուտքում (կռիվ գերմանական որդենների դեմ Մերձբալտյան յերկրում) և հյուսիս-արևելքում (կռիվ Նովգորոդի դեմ, Մոսկվայի իշխանության դեմ), որոնցով նրանք իրենք շահագրգռված չեյին։ Սրա հետ միասին նրանք շահագործման առարկա դարձան լեհ-լիտվական մագնատների համար։ Այս պատճառով ուկրայնական յերկրները թշնամական դիրք են բռնում և անջատողական շարժումների ոճախ դառնում Լիտվա-ռուսական պետության մեջ։

Սակայն XVI դարում լեհ-լիտվական վերնախավը իր համար գտնում և մի անսպասելի դաշնակից հանձին Ուկրայնայում հանդես յեկող նոր ուժի՝ ուկրայնական մագնատության, որն ուներ այդ ժամանակներն Ուկրայնայում կազմվող խոշոր ֆեոդալական տնտեսություններ։

Արդեն XV դարում Վասկե Հորդայի անկումով Ուկրայնայի տերրիտորիայի վրա արտաքին պայքարը հանդարտվում է։ Զապորոժյեյի բնակեցումը, որտեղ կազմվում է ուկրայնական կազակությունը, արտաքին պաշտպանություն և ստեղծում նաև հին ուկրայնական հողերում՝ Կիևշչինայում, Վոլինում, Պոդոլիայում, —որոնք այս ժամանակ ստացել եյին «վլաստ» («վլաստ»—իշխանություն—տերրիտորիա կազմակերպված պետական իշխանությամբ), տեղի յե ունենում տնտեսական զարգացման ուշացած պրոցես. աճում են խոշոր հողային կալվածքներ հացահատիկային և անասնապահական մեծ տնտեսությամբ, որոնք աբրագորեն կուլ են տալիս մանր շլյախտայի (մանր ազնվականության) նախկին փոշիացած հողատիրությունը և ստրկացնում Ուկրայնական գյուղացիության լայն մասսաներին։

Այս կալվածքի կենտրոնում գտնվում է բարինի տունն իր հողով, որ մշակում են ճորտ գյուղացիները (ֆոլվարկ)։ 1529 և 1566 թվականների լիտվական ստատուտները և 1557 թվականի „Устава на волокин"-ն մացնում են խիստ նորմաներ գյուղացիական հողաբաժինների (վոլոկների) և կռվորական պարհակների համար, որոնք սահմանվում են շաբաթական 3 որ, բայց

լրացվում են արտակարգ մասսայական «տոլոկաններով» (խոտհունձի աշխատանքներով) ու դաշտային բերքահավաքի աշխատանքներով։ Գյուղացիները հայտարարվում են «ոտչիչ»-ներ (ժառանգականներ), «դասեդելի»-ներ (նատածներ), «ենեզոխոժի»-ներ (այսինքն հնարնակներ, վորոնք իրավունք չունեն տեղափոխվելու)։ Բարինի ֆոլվարկում կուտակվում են հացահատիկի խոշոր պաշարներ, վորոնք հասնում են հարյուրավոր տոննաների։

Խոշոր ֆեոդալ-մագնատն այս հայի պաշարներն սկսեց արտահանել Լեհաստանի վրայով Արևմուտք, դեպի Գդանի նավահանգիստը (Դանցիգ) և այնտեղից Արևմտյան Յեվրոպա, վորը մեծ պահանջ եր ներկայացնում դեպի Ուկրաինայի հացահատիկային ու անասնային արդյունքները։

Հանդես են գալիս ուկրաինական խոշորագույն մագնատներ՝ իշխան Ոստրոժսկին (մոտ 80 քաղաքի ու ավանի և մոտ 2700 գյուղի տեր), Կորեցկիները, Զբարաժսկիները, Ռուժինսկիները և ուրիշներ։

Հենց այս մագնատները շահագրգռված դուրս գեկան սերտ դաշինք կնքելու Լեհ-լիտվական պետության հետ, վորի վարչական ապարատն ու ռազմական կազմակերպությունը պետք և ապահովեին նրանց գերիշխանությունն ուկրաինական գյուղացիության և իր քաղաքական պահանջները հայտարարող ուկրաինական մանր շլյախտայի վրա, վորն իր հողերից վտարվում եր մագնատության հարձակման հետևանքով։

1569 թվին Լյուբլինում սեյմի գումարվեցին Լեհաստանի, Լիտվայի և ուկրաինական յերկրների ֆեոդալները։ Կրկին հերթի յեր գրված բոլոր հողերի վերջնական միացման (ունիայի) հարցը։ Այս միացումը փաստորեն նշանակում եր հողերը գնել Լեհաստանի իշխանության ներքո։ Այս անգամ հարցը լուծեցին ուկրաինական պատգամավորները։ Այն ժամանակ, յերբ Լեհաստանի տարաջադրած պայմանների հետ չհամաձայնող լիտվական պանները հեռացան սեյմից, ուկրաինացիք անմիջականորեն համաձայնության յեկան լեհական ֆեոդալների հետ և ակտ ստորագրեցին ուկրաինական հողերը Լեհաստանին միացնելու մասին։

Նրանք լեհական մագնատների հետ դաշնակցած, իրենց ձեռքն են գրավում ուկրաինական հողերի կառավարման ամբողջ գործը։ Նրանք հանդիսանում են ուկրաինական հողերի ներկայացուցիչները լեհական սեյմում, բարձր պաշտոններ են գրավում բուն Ուկրաինայում։ Նրանցից են նշանակվում զորավար-

ներ, առանձին մարզերի կառավարիչներ, կաշտելյաններ, ամրոցների պարետներ և այլն։ Նրանց ձեռքումն են կենտրոնանում նաև ուկրայնական լավագույն հողերը։ Տեղական մանր ֆեոդալները փաստորեն յենթարկվում են նրանց։

Ունիան մուտք է բացում դեպի Ուկրայնա նաև լեհական մագնատի համար, վորն առաջանում է ուկրայնական մագնատի հետ կողք կողքի և միավորվում նրա հետ ընդհանուր դավթոդական քաղաքականության մեջ։ Այսպես շատանում են լեհական մագնատներ՝ Պոտոցկիների, Կալենովսկիների, Կոնեցպոլսկիների կալվածքները։ XVI դարի վերջին ուկրայնական ամբողջ Աջափը նրանք խլում են և հարձակումը փոխադրվում է Ձախափը, վորտեղ նույնպես հանդես են գալիս Տիշկևիչների, Կոնեցպոլսկիների, Վիշնևեցկիների խոշոր տիրապետությունները (վերջինս գրավեց Պոլտավոյի ամբողջ նահանգը և իրեն յենթարկեց 50-ից ավելի ավան և գյուղ և մոտ 40 հաղար գյուղացիական տնտեսություն)։

Իր ներքին միասնականությունն ավելի ուժգնորեն ամրացնելու համար ուկրայնական-լեհական մագնատների գերիշխող բլոկը քաղաքական ունիան լրացնում է յեկեղեցականով, վորը հաստատված եր 1596 թվին Բրեստում։

Յերկու ունիան էլ (Լյուբլինի և Բրեստի) գերիշխող ֆեոդալական վերնախավի գործն եր։ Յեկեղեցական ունիան ուղղափառ և կաթոլիկ յեկեղեցու յուրատեսակ միացումն եր՝ ուղղափառ յեկեղեցու յենթարկումով Հռոմի պապին։ Այս ունիայով ամենից ավելի շահագրգռված եյին ուղղափառ յեկեղեցու բարձրաստիճան սպասավորները՝ յեկեղեցական մագնատները, վորոնք աշխարհական մագնատների նման այս ճանապարհով ապահովում եյին իրենց համար քաղաքական և հողատիրական արտոնություններ, վորոնք լեհական թագավորության մեջ հատկացված եյին միայն կաթոլիկ հոգևորականությանը։ Ունիան սրա հետ միասին նպաստում եր լեհական և ուկրայնական մագնատների կուլտուրական մերձեցմանը և ամրացնում նրանց ներքին դոդումը։

Ունիայի բուն պատմությունն սկսվում է ֆեոդալական յեկեղեցական յերարխիայի ընդհարումով աճող մեշչանական-կազակային ոպոզիցիայի հետ, վորը պաշտպանելով իր ազգային ինքնուրույնությունը, դրա հետ միասին պաշտպանում է նաև իր ազգային կրոնն ու կուլտուրան։

Լեհական և ուկրայնական մագնատների դավթողական քաղաքականությունը, պաշտպանություն ստանալով լեհական կառավարության կողմից, համառ դիմադրություն և առաջացնում ուկրայնական գյուղացիության, շլյախտայի և ձախափնյա քաղաքների մեշչանության աստիճանաբար զոդվող, միմյանց հետ միացող ուժերի մեջ։

Անընդհատ մեծացող ճորտատիրական կեղեքման դեմ աճում և գյուղացիական շարժումների լայն ալիքը։ Գյուղացիները փախչում են հարավային տափաստանը և հավաքվում Դնեպրի կղզիներում, սահանքների մոտ, վորտեղ ստեղծում են իրենց ռազմական կազմակերպությունը՝ Զապորոժյան Սեչը (Զապորոժյան ամրավայր)։ XVI դարի վերջերից նրանք այստեղից համառ կռիվ են սկսում վոլոստի-իշխանության մեջ ամրացած ֆեոդալի դեմ։

Կռվի յե յելնում նաև ուկրայնական մանր ֆեոդալը—մանր շլյախտիչը—վորի հողերը նվաճում և մագնատը, նրան իրեն դարձնելով կախում ունեցող մարդ (այս հողազուրկ հողատերերի մի մասն իջավ ու հասավ գյուղացիության վիճակին և ճորտացվեց. այսպիսիք են պուտնի կոչված ծառաները և զրահավոր բոյարներն ուկրայնական մագնատի կալվածքներում)։ Այս միջավայրից դուրս յելան կազակային առաջին խոշոր ապստամբությունների առաջնորդներ Կոսինսկին և Նալիվայկան—նախկին շլյախտիչներ, վորոնց հողերը գրավել էին իշխան Ոստրոժսկիները։ Այս շլյախտան ամենից ավելի համախմբված ընկերով տեղավորվեց բուն Պոդնեպրովյեյում—լյուբեցկի և ոստերսկի շլյախտաները։

Նրանց հետևից գնում և նաև ուկրայնական քաղաքը, վորը նույնպես աճում ու ամրանում է Ուկրայնայի տնտեսական վերելքի հիման վրա։ Ճիշտ է, Աջափում մագնատության արագ աճումն այստեղ թույլ չտվեց զարգանալու և ամրանալու քաղաքային կազմակերպությանը, վորին կլանում էր մագնատությունը։ Բայց Ձախափին, վորտեղ մագնատությունն ավելի ուշ է թափանցում, քաղաքը բավականաչափ ամրացավ, զարգացրեց արհեստագործական գործունեություն և լայն միջնորդական առևտուր մի կողմից Մոսկվայի և մյուս կողմից հարավում Թյուրքիայի ու Ղրիմի, արևմուտքում՝ Լեհաստանի ու Գերմանիայի հետ։ Ձախափնյա քաղաքները ամուր առևտրական կա-

պերով կապվեցին նաև Ուկրայնայի արևմտյան քաղաքների՝ Լվովի, Դուբնոյի, Ռովնոյի և այլոց հետ։ Իր հողերի ու արհեստագործական ոգտավայրերի համար պայքարելիս բաղխվելով մագնատության հետ, քաղաքային առևտրական մեշչանությունը հանդես և գալիս լեհական քաղաքական գերիշխանության դեմ, վորի պաշտպանության տակ առաջանում եյին Դդանի վաճառականն ու նրա գործակալը, հրյա-որենդարը, վորոնք իրենց ձեռքն եյին հավաքում տեղական առևտուրը։

Սրանք են այն սոցիալական խմբերը, վորոնք միացան մագնատային-լեհական բլոկի դեմ պայքարելիս, յուրաքանչյուրն առաջադրելով իր դասակարգային տարբեր ծրագիրը, բայց համաձայն լինելով ազգային համակենտրոնացման անհրաժեշտության հարցում։ Այս դասակարգային խմբավորումների մեջ որդանապես մտավ նաև ուկրայնական կազակությունը։

Հին, բուրժուական պատմագրության համար կազակությունն ազգային ապադասակարգային կազմակերպություն եր, վորը հանդիսանում եր ուկրայնական անդասակարգ ազգի ներկայացուցիչը լեհական գերիշխանության դեմ պայքարելիս։ Սրանով Ուկրայնայի պատմությունից վտարվում եր դասակարգային պայքարի ուսումնասիրությունը և, այսպիսով, ընկնում եր դասակարգային այն կենդանի ուժերի ըմբռնումը, վորոնք մղում եյին այս պայքարը։

Բայց այս նույն ներքին սահմանափակությամբ տառապում եր նաև մեր, մարքսիստական պատմագրության մեջ գերիշխող Պոկրովսկու դպրոցը, վորը նույնպես պահպանել եր կազակության վոչ-անդամազատ հասկացողությունը և խոսում եր XVII դարի «կազակային հեղափոխության» մասին։

Միայն ամենավաղ փուլերում, XVI դարում, կազակությունը կարող եր պահպանել ռազմա-արհեստագործական միության սկզբնական բնույթը։ Վոլոստից հարավային լայն տափաստանները փախած գյուղացին այստեղ հանդես եր գալիս իբրև վորսորդ, ձկնորս, ուղղակի իբրև ռազմական միջոցներով ապրող։ Բայց նստակյաց դառնալով և մտնելով ամուր կազմակերպության մեջ, Զապորոժյեի կազակությունն ապրեց շերտավորման ընդհանուր պրոցես։ Դնեպրում, Խորտիցա կղզում տեղավորվեց նրա կենտրոնը՝ Զապորոժյեի Սեչի կայանը, վորտեղ ապրում եր կազակների ավագանին և ուր կենտրոնացված եր կառավարումը։ Այս ավագանին ուներ բավականաչափ ռազմական ավար

և առևտրական յեկամուտներ, հարուստ ձմերանոցներ (հարուստ կազակների դաստակերտները Զապորոժյեյի տափաստանում)։ Սեչականները իրենք անմիջական կապ եյին պահպանում վոլոստի հետ, հաճախ պահպանելով այնտեղ նստակեցություն և մասնակցելով նրա հասարակական կյանքին ու պայքարին։ Նրանք նույնիսկ մասամբ ներգրավվում են վոլոստի քաղաքական ֆեոդալական կազմակերպության մեջ։ Լեհական կառավարությունը, վորը ռազմական ուժի կարիք եր զգում, կազակության մի մասը—մի քանի հազար հոգի—մացրեց ցուցակի մեջ, կամ ռեյեստրը, և ստեղծեց կազակային ծառայող, «ռեյեստրային» զորք, վորն իր ծառայության համար ստանում եր ռոճիկ և հողամասեր։ XVII դարում այս ռեյեստրային կազակության վերնախավն արդեն փաստորեն ձուլվում և հողատիրական շլյախտայի հետ, այն ժամանակ, յերբ կազակների շարքային մասսան անմիջականորեն հարում է գյուղացիությանը։

Ուկրաինական հասարակության առանձին դասակարգեր մի անգամից չեն մտնում պայքարի մեջ։ Ճորտատիրական կեղեքման դեմ, վորն առանձնապես սրվեց XVI դարի կեսերից, առաջինը վոտքի յելավ Զապորոժյեյի կազակության շուրջը համախմբված գյուղացիությունը։ Սակայն արդեն այս տարիներին շարժման շարքերում նրա ռազմական ղեկավարների դերում մենք տեսնում ենք ոպոզիցիոն շլյախտային։ 1592 թվին Կոսինսկին կազմակերպում և կազակային արշավ Ոստրոժսկու հողերի վրա, 1595-1596 թվերին հանդես և գալիս Լորոդան, իսկ նրա հետևից՝ Նալիվայկոն, վորն իր կյանքը վերջացրեց Թուրքական գերության մեջ, կազակային յերգերի այդ հերոսը, յերգված Ռիլեևի «դումա»-ներից մեկում։

Բայց վոչ շլյախտայի մասսան, վոչ մեշչանությունն ամբողջությամբ գեռևս ընդգրկված չեր շարժումով, քանի դեռ մագնատության հարձակումը չեր բռնել բուն Պոդնեպրովյեն և Զախարը։ Դրա հետ միասին լեհական-մագնատային բլոկն ել կոմպրոմիսային քաղաքականություն և վարում, ջանալով չսրել հարաբերությունները՝ այդ ժամանակ կազակության ռազմական աջակցության կարիքն զգալով Մոսկվայի թագավորությանը տիրանալու համար ծավալված կռվում։ 1617-1618 թվերին Մոսկվայի մոտ կենտրոնացված եր կազակային մեծ զորք իր իսկ հետման Սագայդաչնու հրամանատարությամբ։ Բայց Մոսկվայի պատերազմն ավարտվեցավ անցավ լեհական մագնատության հա-

մաբ, և նա կրկին հարձակման և անցնում Ուկրայնայի վրա՝ կռիվ սկսելով Զախարի համար։

Կռիվը նորից սրվում է։ Այս կռիվն առանձին ուժով ծավալվեց 1630 թվին, երբ կազակները՝ վոռոքի կանգնեցին Տարաս Տրյասինայի գլխավորությամբ (այն նույն Տարասի, որի մասին Գոգոլը գրում է իր «Տարաս Բուլբա» վիպակը)։ Այս անգամ դժվարությամբ ճնշելով շարժումը, որի մեջ ակտիվ մասնակցում է ժողովուրդը, լեհական կառավարությունը փորձ արեց Սեչը կլուրելու ժողովուրդից, որի մասնակցությունն առանձնապես տեսակու չեր դարձնում շարժումը։ Ֆրանսիայից հրավիրված ճարտարագետ Բոպլանը սահմանքներից դեպի ժողովուրդ տանող ճանապարհի վրա կառուցեց Կոդակ ամրոցը, որը 1635 թվին գրավեց լեհական կայազորը։ Բայց նույն տարում նոր ապստամբությունն ավերեց ամրոցը և մոտ չորեք տարի սպառնալիքի տակ պահեց Զախարի լեհական-մագնատական տիրապետությանը։

Գնալով ավելի լայնանում ու հզորանում է շարժումը, որին գլխավորում են կազակային առաջնորդներ Պավլյուկը, Գուռնյան, Ոսարանիցան։ Մի անգամ էլ հաղթանակ տանելով 1638 թվին, լեհական-մագնատական բլոկն այս անգամ իր հաշվեհարդարի ծանրության կենտրոնը նշանակելի չափով ուղղեց հատկապես ժողովրդի, այս թվում նաև ավագանի-շլյախտական բլոկի վրա։ 1638 թվի այսպես կոչված Որդինացիան, որը հաստատված էր Ռադայում, Մասլովոյի բանակատեղում, հարվածում էր նաև ավագանուն, հեռացնելով նրան ռեյեստրային կազակության դիկավարությունից, փոխարինելով նրան մագնատության դրած մարդկանցով, որոնց իրավունք էր վերապահվում անսահմանափակ կերպով գերիշխելու Ուկրայնայում։

Այս միջոցներով շարժումը ճնշվեց մի ամբողջ տասնամյակով (1638—1648), որը լեհական ազնվական ու բուրժուական պատմաբանների մոտ ստացավ «վոսկե դարերի» ժամանակամիջոց անունը։ Այս ժամանակաշրջանում մագնատները, հենվելով լեհական ադմինիստրացիայի վրա, անբաժանորեն տիրապետում են Ուկրայնայում, գրավելով հողեր և տարկացնելով բնակչությունը։

Բայց այս քաղաքականության հետևանքը պիտի լիներ լեհական-մագնատական գերիշխանության դեմ մղվող կռվում նշված երկու խմբերի՝ մի կողմից—գյուղացիության և տոհմական կազակության, մյուս կողմից—ավագանի-շլյախտական-մեշչանա-

կան բլոկի միացումը։ Յերկրորդ բլոկի կազմակերպված յելույթի հենց այս փաստի մեջ և այն նոր պայքարի առանձնահատկությունը, որ բարձրացավ Ուկրայնայում, և նրա տարբերությունը XVI դարի վերջի—XVII դարի սկզբի կազակային պատերազմներից։

3

Ավագանի-շլյախտային բլոկի գլուխ կանգնեց չիգիրինյան հարյուրապետ Բոգդան Խմելնիցկին։ Նա պատկանում էր հենց կազակային այն ավագանուն, որին 1638 թվի Որդինացիան հանձնել էր լեհական մագնատության իշխանությանը, և շուտով իր վրա զգաց սրա ամբողջ ծանրությունը։ Լեհական շլյախտային մոտիկ, Ուկրայնայի լեհական թագադիր հետման (լեհական զորքերի հրամանատար) Պոտոցկու շրջապատին պատկանող, լեհական պալատում յեղած Խմելնիցկին այնուամենայնիվ զրկվեց իր կալվածքներից և անձնական հալածանքի յենթարկվեց լեհական շլյախտիչ Զապլինսկու կողմից։ Այս իրադարձությունների ազդեցության տակ Խմելնիցկին հեռանում է Զապորոժյան Սեչը և այնտեղ պատրաստվում կռվելու Լեհաստանի և մագնատների դեմ։

Մենք այս պատրաստության մասին քիչ գիտենք։ Կազակային տարեգիր Վելիչկոն, որը գրել է արդեն XVII դարի վերջին կամ նույնիսկ XVIII դարի սկզբին, մեջ է բերում Խմելնիցկու ունիվերսալները (այսպես եյին կոչվում հետմանական պաշտոնական կոչերը) ուկրայնական ամբողջ շլյախտայությանը („шляхетско урожоные казаки“)։

Թեև այս ունիվերսալներն ավելի ուշ ստեղծված բաներ են, բայց նրանք անդրադարձնում են մերձավոր սերնդի տված գնահատությունը Խմելնիցկու դասակարգային որիենտացիային։ Նա գիմում էր շլյախտային, կազակային ավագանուն, արտոնյալ կոդակությանը և հենվում էր նրա վրա։ Զապորոժյեյի Սեչն սկզբում, գոնե պաշտոնապես, մնում է մի կողմ։

Լեհական-մագնատային բլոկը շուտով ստիպված էր զգալու շարժման դասակարգային եյության փոփոխությունը։

1648 թվի մայիսի սկզբին Բոգդան Խմելնիցկին իր զորքով շարժվեց Ուկրայնայի վրա։ Խմելնիցկու դեմ ուղարկված զորքի նշանակելի մասը յերկու հաջորդական հանդիպումների ժամանակ Դեղին Ջրերի մոտ և Կորսունի մոտ (մայիսի 26-ին) անցավ

Խմելնիցկու կողմը։ Լեհական մեծաւարիստներն Ուկրայնայի շըլ-
յախտային մեղադրում էին դավաճանութեան մեջ և Խմելնից-
կու զորքի մեջ հաշվում էին մի քանի հազար շլյախտիչ։

Հունիսի սկզբներին Ուկրայնայի ճանապարհը բացվեց Խը-
մելնիցկու համար։

Խմելնիցկու յելույթն ազգանշան հանդիսացավ նաև հարա-
ճուն գյուղացիական շարժման համար։ Վերջինս բռնկվում է
դեռևս մայիսին, սկսելով Զախափից։ Այստեղ, Վիշնևեցկու կալ-
վածքներում, տեղի յե ունենում նոր մագնատի կատաղի կռիվ
իր տիրապետությունը հաստատելու համար, բարձրանում է մաս-
սայական ապստամբություն, ժողովրդական գյուղացիական-կա-
զակային ապստամբության հերոս Մաքսիմ Կրիվոնոսի գլխավո-
րությամբ։ Հողը պատրաստ էր, և չանցավ մի ամիս էլ, ինչ ամ-
բողջ Զախափն ընկավ ապստամբների ձեռքը։ Լեհական մագնատ-
ները փախան։ Գյուղացիական ջոկատները շարժվում էին նրանց
հետևից, մաքրելով Զախափը։ Նրանց հարեց Բելոռուսիայի սահ-
մանամերձ մարզերի գյուղացիությունը։

Հունիսի վերջին Ուկրայնայում տեղի յե ունենում կրկնա-
կի պատերազմ. յերկու ուժ ընդհանուր կռիվ են սկսում լեհա-
կան-մագնատային իշխանության դեմ և միանում այս կռվում։

Բայց թշնամու ընդհանուր լինելը խնդիրների նույնություն
չի նշանակում, և սխալ կլիներ մի շարժումը լուծել մյուսի մեջ,
դրանք հանդեցնել ինչ-վոր մեկ բանի։ Պայքարի եությունը հենց
նրա բարդության մեջ է, նրա ներքին յերկվության մեջ։

Գյուղացիության կռիվը ուղղված է ֆեոդալական կեղեք-
ման ամբողջ սիստեմի դեմ, բայց ինչպես և ֆեոդալական-հոր-
տատիրական դարաշրջանի գյուղացիական ամեն մի պատերազմ
—այս կռիվը տարերային է, անընդունակ առաջ մղելու կոնկրետ
հաստատուն ծրագիր, անխուսափելիորեն փոշիացած է։ Ավազա-
նի-շլյախտա-մեշչենական բլոկի կռիվը գերիշխող դասակարգային
միջուկի կռիվն է, ուկրայնական կազմավորվող ազգի կռիվը սըն-
տեսական գերիշխանության իր դասակարգային միանգամայն
վորոշակի ծրագրով, բայց այս պատճառով էլ ազգային ինքնու-
րույնության նույնքան վորոշակի ծրագրով։ Սակայն, այս ծրա-
գիրն ուղղված է դեպի յերկու կողմ. լեհական-մագնատային գե-
րիշխանության և ժողովրդական մասսայական շարժման դեմ,
վորը խախտում է այս դասակարգերի ֆեոդալական գերիշխա-
նությունը։

Այսպես, միահյուսվելով, համաձայնության գալով և բաղխվելով միմյանց, Ուկրաինայում տեղի են ունենում յերկու պատերազմ։ Յուրաքանչյուր շարժում ունի նաև իր առաջնորդները։ Յեթե ավազանի-շլյախտայի գլուխ կանգնած և Բոգդան Խմելնիցկին, ապա գյուղացիական շարժումը գլխավորում են Կրիվոնոսը, Նեչայը, Գլադկինը և ուրիշները։ Յեթե կազակային ավագանու շուրջը կազմված կազակային դուման գովերգում և Խմելնիցկուն, ապա ժողովրդական յերգը յերգում է Կրիվոնոսի, Նեչայի մասին և ավելի ու ավելի թշնամաբար և վերաբերվում դեպի հետմանը։

Խմելնիցկին հենց սկզբից ըմբռնում է գյուղացիության շարժման ընդունած թափի վտանգը և փորձում է զսպել այն։ Նա ջանում է ապստամբող «խոլոպներին» հետ ուղարկել «գութանի տուն», այսինքն կուլորական աշխատանքների, և ավագանի-շլյախտային ծրագրի հիման վրա համաձայնության գալ լեհերի հետ։ Բայց սրա հետ միասին նա շտապում է գլխավորելու ամբողջ շարժումը, վորպեսզի տիրանա նրան։ Շարժման այս լայն թափի մեջ են նրա ուժն ու նրա հաջողության նախադրյալները։ Միայն հենված այս մասսայական շարժման վրա Խմելնիցկին կարողացավ միքանի ամսում ամբողջ Ուկրաինան մաքրել լեհերից և 1648 թվի հոկտեմբերի 20-ին Պիլյավցիի մոտ լեհական զորքին կրկին ջարդելուց հետո ճանապարհ բացել իրեն դեպի Լեհաստան։ Այստեղից Խմելնիցկին շարժվեց Գալիցիայի խորքը (Արևմտյան Ուկրաինա), հասավ մինչև Լվով, Լվովից մինչև Զամոստյի և այստեղ, Լեհաստանի սահմանում, կանգ առավ։

Ինչու՞ կանգ առավ Խմելնիցկին։ Չե՞ վոր գրությունը բացառիկ նպաստավոր եր. լեհական զորքը ջարդված եր, Լեհաստանի ճանապարհը՝ բացված. բուն Լեհաստանում մագնատ-շլյախտային խմբավորումները պայքար եյին մղում նոր թագավոր ընտրելու շուրջը (լեհական Վլադիսլավ թագավորը մեռավ 1648 թվի մայիսի 20-ին, կռվի հենց սկզբին), վորպիսի հանգամանքն էլ ավելի թուլացրեց Լեհաստանի դիմադրության ուժը։

Յեթե այնուամենայնիվ Խմելնիցկին չփորձեց առաջ շարժվելու դեպի Լեհաստան, ապա սրա պատճառը պետք է վորոնել բուն Ուկրաինայում շարժման ներքին պայմանների մեջ։ Այստեղ, ինչպես մենք տեսանք, կար յերկու շարժում իրենց հատուկ խնդիրներով, տարբեր առաջնորդներով։ Խմելնիցկու հաշիվների մեջ չեր մտնում Ուկրաինան թողնելով իր մրցակիցների ձեռքը հեռանալ Լեհաստանի խորքերը։ Ընդհակառակը, ավագանի-շլյախտային

բլոկը պայքար էր մղում Ուկրաինայում տիրապետելու համար, և, արտաքսելով լեհական ադմինիստրացիային ու մագնատներին, նա ամենից առաջ պետք է հոդ տաներ իշխանության բուն ապարատին տիրանալու համար։ Այս պատճառով Խմելնիցկու ուղին ընթանում էր վոչ թե դեպի Վարշավա, այլ դեպի Կիև։ 1648 թվի դեկտեմբերին նա հանդիսավոր կերպով մտնում է Կիև և այստեղ ամրացնում ավագանու իշխանությունն Ուկրաինայում։

Ցանկանալով ամրացնել այս իշխանությունը, նա հենարան և վորոնում միջազգային կապերի մեջ, Դրիմի և Մոսկվայի, հարաբերություններում։

Մինչ այս Լեհաստանը նոր թագավոր Յան-Կազիմիրի (նախորդի յեղբոր) ընտրությունից հետո 1649 թվի ամառվա սկզբին փորձեց նորոգել պատերազմը։ Սակայն Խմելնիցկին մեծ զորք ուներ, վորին հարեց Դրիմի խանի զորքը։ Խմելնիցկու ռազմական նշանակելի հաջողություններն Զբարժի և Զբորովի մոտ լեհական զորքին ծանր դրության մեջ դրին, վորից նրան հանեց մառամը թաթարների դավաճանությունը, վորոնք դրամական խոշոր փրկագնով հաշտություն կնքեցին լեհերի հետ։ Բայց այնուամենայնիվ գերակշռությունը Խմելնիցկու կողմն էր, և Լեհաստանն շտապեց ընդունելու կազակային ավագանու պայմանները։

1649 թվի ոգոստոսին Զբորովի մոտ հաշտություն կնքվեց։

Զբորովի հաշտությունը ձևնտու էր կազակային ավագանուն, վորի պահանջները նա լիովին բավարարում էր։ Լեհաստանն ընդունեց ուկրաինական ավտոնոմիան, իբրև ուկրաինական հետամնացություններ առանձնացնելով Կիևի, Չերնիգովի և Բրացլավի կուսակալությունները (զորավարությունները), այսինքն Կիևշչինան, Պերեյասլավշչինան և Չերնիգովշչինան Զարուտինի և Վոլինիայի ու Պոդոլիայի արևելյան մասը՝ Աչմանին։ Այս վայրերում վերացվեց լեհական ադմինիստրացիան և փոխարինվեց ընտրովի, ավագանու ադմինիստրացիայով։ Վերացվեց մագնատային հողատիրությունը, վորն անցավ ավագանի-շլյախտայի ձեռքը. հեռացվեց լեհական վաճառականը, վոր տեղ էր մաքրում ուկրաինական մեշչանի համար։

Բայց Զբորովի հաշտությունը վոչինչ չտվեց ուկրաինական գյուղացիությանը. կազակային ռեյեստրը, այսինքն կազակային ազատ զորքը, վոր հասցված էր մինչև 40 հազար հոգու,—սա կազակային ավագանու ռազմական ուժի հարցն է, և վոչ թե բուն

գյուղացիության դրության հարցը, վորին կառչել և հոգատեր շլյախտիչը։

Կազակային ռեյեստրի ճշգրիտ հաստատումը նշանակում եր, վոր ուկրայնական մնացած ամբողջ գյուղացիությունը մնում եր ճորտական կախման մեջ։

Մոսկվայի դպիր Կունակովը, վորն ուշադրությամբ հետևում եր ուկրայնական անցքերի ընթացքին, 1649 թվի դեկտեմբերին Վարշավայից հաղորդում է.

«Բոգդան Խմելնիցկու մոտ հավաքվեցին 50 000-ից ավելի խլոպ և ցանկանում էին նրան սպանել. իբրև թե ինչու չես առանց մեր խորհրդի հաշտվել թագավորի հետ»[1]։

Հիրավի, Զբոլովի հաշտությունը բացում և դասակարգային պայքարի նոր փուլ, պայքար, վոր ծավալվեց 1648 թվին։ Յեթե 1648—1649 թվերի շրջանում յերկու բլոկը միացան Լեհաստանի և մագնատության դեմ կռվելիս, ապա կռվի ժամանակավոր վախճանը, վորը հաղթանակ բերեց ավագանի-շլյախտայի բլոկին, պետք և հանգեր նախկին դաշնակիցների բաղխմանը։

4

Ավագանին ամրացնում և իր հաջողությունները։ Կազակային վերնախավից արագորեն կազմակերպվում և գնդի նոր ադմինիստրացիա։ Խմելնիցկին լայն կերպով ունիվերսալներ-շնորհումներ և բաժանում ավագանու այս վերնախավին և շլյախտային՝ հողերի տիրանալու համար, ստրկացնելով ուկրայնական գյուղացիությունը։ Ի պատասխան սրա՝ նոր տերերի դեմ աճում և գյուղացիական ապստամբությունների ալիքը։ Ուկրայնան և սահմանակից բելոռուսական հողերը լի յեն Կրիվոնոսի, Ներաբայի, Դոնեցի, Պոդոբեյլի, Կրիչևսկու, Խուդոլեյի գյուղացիական ապստամբ ջոկատներով։

Խմելնիցկին այժմ ակտիվ կռվի մեջ և մտնում այս գյուղացիական շարժման դեմ,—կռիվ, վորով լցվում է 1650 — 1652 թվականների ամբողջ շրջանը։ «Այնտեղ մեր բոլոր ուբյայդնիկները գաղանի հրաման ունեն ինձնից, վորպեսզի ինքնագլուխներին, վորոնք յեթե խռովություն սարքեն, բոլորին մահապատժի յենթարկեն»[2],— տեղեկացնում է Խմելնիցկին։

---

[1] Հարավային և Արևմտյան Ռուսաստանի ակտեր, III հ., եջ 401.

[2] Բաղված է Մ. Գրուշևսկու «Ուկրայնայի—Ռուսիայի պատմությունը» գրքից, IX հ., I մաս, եջ 21։

Յետ, իրոք այս տարիներին հետզհետե ժողովրդական առաջնորդների մեծ մասն ընկնում է, մասամբ իր իսկ Խմելնիցկու հետ կռվելիս, մասամբ լեհերի հետ կռվելիս (Նեչայ Կրիվոնոս)։

Ճորտացվող գյուղացիությունը ճորտական լծից փախչում եր դեպի Զապորոժյան Սեչը կամ Մոսկվայի սահմանից ներս։ Ուկրայնայի լեհական կոմիսար Ադամ Կիսելը 1650 թվին հաղորդում է Վարշավա հետևյալը.

«Ամբոխն այլևս անպոր լինելով հանդուրժել բռնապետությունը և այն, վոր նրանց խռովությունների ու պատերի դեմ ապատամբելու համար սպանում եյին զանազան տեղերում, հեռանում է Դնեպրից այն կողմ, և յես չգիտեմ, թե ել ով է մնացել այստեղ»։[1]

Ուկրայնական ժողովրդական յերգը այսպես եր հիշատակում այնուհետև Խմելնիցկու գործունեությունը։

Գյուղացիական հուզմունքները շուտով պետք է անդրադառնային նաև ավագանի-շլյախտայի դրության վրա, վորը սխալմամբ կարծում եր, թե կռիվը լեհական-մագնատային բլոկի դեմ վերջացած է։ Վերջիններս չեյին պատրաստվում հանձնելու իրենց դիրքերը. նրանք արթուն հետևում եյին Ուկրայնայի իրադարձություններին, հաշվի եյին առնում ուկրայնական շարժման թուլացումը։

Դեռևս 1650 թվի մարտին լեհական կոմիսար Ադամ Կիսելը գրում եր լեհական թագավորին, թե լեհական ինտերվենցիան նպատակ ունի «յերկու կարևորագույն հանգամանք, այն է՝ կաթոլիկ դավանանքի վերականգնումը և տերերի համար ոգտակար ճորտական պարհակների կատարումը»[2]։

Լեհական մագնատները ժամանակ առ ժամանակ ստիպված եյին լինում սահմանափակվելու նրանց վերադարձված Վոլինիայի և Պոդոլիայի տերրիտորիայով, վորտեղ նրանք դաժան հաշվետես են կատարում գյուղացիության վերաբերմամբ Հետման Կալինովսկու լեհական զորքի պաշտպանությամբ։ Պան Կորեցկին, վերադառնալով իր կալվածքը, ամենից առաջ հրամայեց միքանի գյուղացու «բրերի վրա նստեցնել», վորպեսզի «խստության որի-

---

[1] Նույն տեղում, եջ 23։

[2] «Հին ակտերը վերլուծող ժամանակավոր հանձնաժողովի հրատարակած հիշատակարանները», II հ., II բաժին, եջ 27. Կիև. 1846։

նակ ցույց տա՝ ուրիշներին սարսափեցնելու համար»։ Ժողովրդի մեջ յերկար ժամանակ ապրում և պանելի դաժան մահապատիժների հիշատակը։

1650 թվի վերջերից լեհերն սկսում են պատրաստվել հարձակումը նորոգելու հետամնական Ուկրայնայի վրա։

Կազակային ավագանուն հարկավոր եր կրկին պատրաստվել կռվելու, բայց այս անգամ դասակարգային բազան խիստ նեղացած դուրս յեկավ, ավագանի-շյախտային բանակը հանդես յեկավ մեկուսացած՝ չհենվելով գյուղացիական հզոր շարժման վրա. նրա ուժերը նվազել եյին։ Յելքն այս դրությունից պետք և լիներ արտաքին ոգնության դիմելը, դրսում դաշնակից վորոնելը։ Խմելնիցկին դիվանագիտական աշխուժ բանակցություններ և վարում. նա դաշնակիցներ ե վորոնում Թյուրքիայում, Շվեդիայում, Մոսկվայում։ Բայց ռեալ դաշնակիցը միայն Մոսկվան եր, վոր անմիջականորեն շահագրգռված եր Ուկրայնայում ծավալված կռվով։ Այս շահագրգռվածության մեջ եր, սակայն, նաև Մոսկվայի միջամտության վտանգը, Մոսկվան կռվի մեջ մտավ իր ծրագրով, իր նպատակներով։

Այսպես, Ուկրայնայում դասակարգային պայքարը բարդացավ Ուկրայնայի համար Մոսկվայի ու Լեհաստանի պայքարով։ Սա հետևանք եր այն պայմանների, վորոնց մեջ ծավալվեց Ուկրայնայի պայքարն ազգային առանձնացման համար։ Ուկրայնայի ազգային զարգացումն ուշացավ և այժմ բաղխվում եր քաղաքականապես ավելի զարգացած ազգերի՝ Լեհաստանի ու Մոսկվայի հետ, վորոնց միջամտությունը պետք և խիստ փոփոխեր կռվի ուղղությունն ու յելքը։

Մոսկվան, վոր դարձել եր կենտրոնացած բազմազգի պետություն, XVII դարում արագորեն ընդարձակում եր իր տիրապետությունը։ Ուկրայնայի իրադարձությունները 1649 թվի սկզբից գրավում եյին Մոսկվայի կառավարության ուշադրությունը, վորը հոգ եր պատրաստում Ուկրայնայի վրա արշավելու և նրան տիրելու համար։ Կազակային ավագանին Մոսկվայի կառավարությանը դիմում եր վոչ անյերկյուղ, նա խուսափում եր ճշգրիտ վորոշելու Ուկրայնայի ապագա հարաբերությունները Մոսկվայի հետ, իսկ ոգնություն խնդրելով, համառորեն վերապահություն եր անում, վորպեսզի ցարը հրամայի իր զորքին «գնալ Լիտվայի վրա», հարձակվել «իր կողմից» Սմոլենսկից, «իսկ Լեհաստանի վրա յես Զապորոժյեյի զորքին եվ ոգնության

7016 ֆ.
A II 398859

չեմ կանչել։ Լեհաստանը չի կարող դիմանալ մեր և Ղրիմի ցարի դեմ»։[1] Բուն Ուկրայնայում Մոսկվայի զորքի հանդես գալու հեռանկարը վախեցնում էր ավագանուն։

Լեհական հարձակումը ծավալվեց յերբ դեռ կողմերը չեյին պայմանավորվել միմյանց հետ։ Իրադարձությունները ավելի արագ կատարվեցին, քան յենթադրում եյին թե Կիևում և թե Մոսկվայում։ Յերբ ավագանին պատրաստ էր ընդունելու Մոսկվայի պայմանները, արդեն ուշ էր։ Ուկրայնական զորքը, վորը հավաքված էր Բերեստեչկի մոտ և այստեղ թողնված իր դաշնակից Ղրիմի խանի կողմից, չափազանց թույլ էր Լեհաստանի հետ կռվելու համար։ Մինչև ճակատամարտը թաթարների կողմից բռնի կերպով տարվելու անվան տակ Խմելնիցկին և ավագանին փախան բանակից. հուլիսի 10-ի ճակատամարտում ուկրայնական զորքը վոչնչացվեց։ Ավագանին ստիպված էր Սպիտակ յեկեղեցում հաշտություն կնքելու, վորի համաձայն նա կորցրեց Զբորովի հաշտության համարյա բոլոր նվաճումները։

Ավագանի-շլյախտային մնում էր միայն Կիևի կուսակալությունը։ Մնացած հողերը վերադարձվեցին մագնատության ձեռքը՝ Լեհաստանի իշխանության տակ։ Հարկավոր յեղավ նորից սկսելու կռիվը։

5

1652 թվից կռիվը մտնում է նոր փուլի մեջ։ Ավագանի-շլյախտան, նահանջելով Դնեպրից այն կողմ, դաշնակցած ձախափնյա մեշչանության հետ, կրկին ձեռնարկում է ուժերի համակենտրոնացման։ Բայց 1651 թվի կռիվը արդեն ցույց տվեց Խմելնիցկուն, վոր նրանք իրենք չեն կարող գլուխ հանել և ավագանին նորոգում է բանակցությունները Մոսկվայի հետ։ Սակայն, մի անգամ ել փորձ է արվում կռվի բախտը վճռելու իրենց ուժերով, բայց ավագանու նոր ձեռնարկումները կրկին անհաջողություն են կրում. Վալախիայում ընկնում է Բոգդանի վորդի Տիմոշ Խմելնիցկին ուկրայնական զորքով. Ժվենեցի արշավանքը նույնպես վոչինչ չտվեց։ Հարկավոր էր վճռել, և 1653 թվի ոգոստոսին Մոսկվայի դիվանագիտության ուժգին ճնշման տակ ավա-

[1] «Киевская Старина», 1880 թ., № 8. Վասիլովի հոդվածը՝ «Բ. Խմելնիցկու առաջին հարաբերությունները Մոսկվայի հետ»։

գանին ընդունում և Մոսկվայի հպատակություն — «հավիտենական ճորտություն»։

Մոսկվայում հարցն արդեն կանխապես վճռված էր։ Դեռևս 1653 թվի փետրվարին կայացավ Բոյարական դումայի վորոշումը Ուկրայնայի միացման մասին։ Հունիսից Մոսկվայում նիստեր էր դումարում Յերկրային ժողովը, (Земский собор), սպասելով Ուկրայնայի կողմից հպատակության պաշտոնական հայտարարմանը։ Վերջապես հոկտեմբերի 1-ին կայացավ ժողովի վորոշումը և Ուկրայնա մեկնեց բոյարին Բուտերլինի Մոսկովյան հանդիսավոր դեսպանությունը։

1654 թվի հունվարի սկզբին Պերեյասլավլում հավաքվեց Մոսկվայի դեսպանությունը հետմանի և կազակային ավագանու հետ՝ հպատակության յերդում ընդունելու համար։ Ավագանին կրկին անգամ փորձեց վորևե չափով պաշտպանել իր անկախությունը և ցարական դեսպաններից պահանջեց հանդիսական յերդում տալ Զապորոժյեյի բոլոր վոլոստներում։ Բայց Մոսկվայի դեսպանները պատասխանեցին վճռական մերժումով. իբրև թե, Մոսկվայում սովորություն չէ, վոր Մոսկվայի ցարը յերդվի իր հպատակներին։

Ճիշտ է, 1654 թվի մարտին ավագանուց և ուկրայնական քաղաքներից դեսպաններին շնորհեցին իրավունքներ և վոլոստներ, հաստատվեց կազակային ավագանու և մեշչանության վորոշակի ինքնորոշում, ավագանուն և շլյախտային ամրացվեցին կալվածքներ։ Մոսկվայի կառավարությունն զգուշանում էր չափազանց հաղթել և խիստ միջոցներով ուկրայնացիների մեջ դիմադրություն առաջացնելուց և սկզբում սահմանափակվեց նրանով, վոր կուսակալ նշանակեց նաև Կիևում։ Դանդաղ ու հաստատ կերպով Մոսկվան իր ձեռքն էր վերցնում Ուկրայնան։

Լեհաստանի հետ պատերազմը նորոգվելուն պես միայն, ուկրայնական ավագանին պետք է զգար իր կախումը Մոսկվայից։ 1654—1655 թվերին կովի որյեկտ հանդիսացավ Բելոռուսիան։ Ուկրայնական ավագանին վաղուց մտադրություն ուներ Բելոռուսիան միացնելու և հարց բարձրացրեց Բելոռուսիայի վրա հարձակելու մասին դեռևս 1651 թվին Մոսկվայի հետ բանակցելիս։ Բելոռուսիայի միացումը պետք է ամրացներ նրա քաղաքական դրությունը և տնտեսական զգալի ոգուտներ տար, ինքնուրույն յելք բացելով նրա համար դեպի Արևմուտք։ Բայց Մոսկվան խնայեց իր թաթը դրեց նվաճված բելոռուսական հողերի

վրա և, հեռացնելով ուկրաինական զորամասերը, նվաճված քաղաքներում դրեց իր կայազորներն ու իր կուսակալները։ Միաժամանակ պատերազմական դրությունն ոգտագործվեց նրա համար, վորպեսզի հարց դրվի Ուկրաինայում Մոսկվայի կուսակալներ և կայազորներ մտցնելու մասին։

Տարաձայնություններն արագորեն սրվում էին, և արդեն 1656 թվին Խմելնիցկին բանակցություններ և վարում նախ Շվեդիայի, իսկ հետո Լեհաստանի հետ, նախապատրաստելով խղումը Մոսկվայի հետ։ Այսպիսով, Պերեյասլավլի ակտը միայն առաջին փուլն եր այն պայքարում, վոր Մոսկվան մղում եր Ուկրաինայի քաղաքական հնազանդեցման համար,— պայքար, վորը շարունակվեց XVII դարի համարյա ամբողջ յերկրորդ կեսի ընթացքում։

Այս պայքարի ընթացքն զգալի չափով վորոշվում եր Ուկրաինայի բուն գերիշխող վերնախավի միջի հակասություններով. խոշոր հողատիրական շլյախտայի ու Աջափի ավագանու և մանր ավագանու ու Զախափի մեշչանության միջև յեղած հակասություններով, այն մեշչանության, վորին տնտեսական կապերի ուժով հարում եր նաև Զապորոժյեի կազակությունը։ Մոսկվայի կառավարությունն Ուկրաինայի իր գաղութային քաղաքականությունը կառուցում եր այս խմբերի միջև յեղած հակամարտության սրման վրա, թուլացնելով նրանց դիմադրությունը փոխադարձ կռվով, մինչև վոր ուկրաինական ավագանի-շլյախտան ընդունեց Մոսկվայի սրիենտացիան։

Բոգդան Խմելնիցկին մեռավ Լեհաստանի հետ բանակցություններ վարելու ժամանակ։ Մոսկվայի կառավարությունը յերկյուղով եր սպասում նոր հետմանի ընտրությունները Ռադայում, վորին անմիջապես հավաքել եր կազակային ավագանին։ Նա առանձնապես յերկյուղ եր կրում, վոր Խմելնիցկու վորդի Յուրիյի ընտրությունը ժառանգական ընույթ կստա հետմանական իշխանությանը։ Մոսկվայից հատուկ լիազորություններով ուղարկված եր դպիր Վասիլիյ Կիկինը, վոր ընորոշ հրահանգ եր ստացել.

«Այո Վասիլիին, վոր ճանապարհ և գնում, Նեժինում և ուրիշ քաղաքներում, հավասարապես խոսել կուսակալների հետ և բոյարների հետ և մեշչանների հետ.... Յեվ չկա արդյոք այժմ ամբոխի մեջ վորևե խռովություն գնդապետների դեմ, և յեթե կա, և ինչի համար, և ինչ են ասում նրանք, և կուզեն ար-

դյոք նրանք, որ նրանց մոտ քաղաքներում պետական կուսակալներ լինեն»։[1]

Հենց այստեղ նշվում եր, որ ռոճիկ չտալու համար բողոքելու դեպքում մեղքը գցել հետմանի վրա։

Այս սկզբնական ագիտացիան շուտով տվեց իր պտուղները։ Յերբ ընտրվեց Հետման Վիգովսկին՝ Խմելնիցկու նախկին զինվորական գրագիրը, Զախարն ապստամբություն բարձրացրեց նրա դեմ, որին գլխավորում եր Պոլտավայի գնդապետ Պուշկարը։ Բայց Մոսկվան նկատի ուներ միայն թուլացնել հետմանին, և վոչ թե կռվել նրա հետ, և նրան թույլ տվեց հաշվետես կատարելու շարժման հետ։

Վիգովսկին, հաղթանակ տանելով, շարունակեց Խմելնիցկու քաղաքականությունը և անցավ Լեհաստանի կողմը Գադյակի 1659 թվի հոդվածների հիման վրա, որոնք ընդարձակել եյին Զբորովի հին դավադրությունը։

Մոսկվան փորձեց իր կողմը վերադարձնել ավագանի-շլյախտան Յուրիյ Խմելնիցկու հեղինակավոր անունով, բայց նա յել աջափնյա լեհերի ավագանու հետ միասին անցավ լեհերի կողմը, իսկ Մոսկվան հատուցեց նրանով, որ 1660 թվին Զուդնովոյի մոտ կորցրեց իր զորքը։

Մոսկվայի կառավարությունն այն ժամանակ վորոշեց հենվել ուկրայնական հասարակության ավելի դեմոկրատական խավերի վրա։ 1663 թվին «Սև ռադայում», Գլուխովոյի մոտ իբրև Աջափի հետման անցավ Զապորոժյեյի կազակության կողմից դըրված Բրյուխովեցկին։

Մոսկվայի ու Լեհաստանի գաղութային շահերի պայքարում, տեղական ուժերի պայքարում աստիճանաբար անհայտանում եյին ազգային պայքարի խնդիրները։ 1667 թվին Մոսկվայի և Լեհաստանի միջև 20 տարով կնքված անդրուսովյան զինադադարը Ուկրայնան բաժանեց նրա յերկու ուժեղ դրացիների միջև։ Մոսկվային անցավ Զախարը Կիևով և նրա մերձավոր շրջակայքով։ Ուկրայնական ազգային շարժման վերջին բռնկումները ջարդվեցին ընդհարվելով Մոսկվայի ու Լեհաստանի համերաշխ դիմադրությանը։ 1668 թվին Մոսկվայի կառավարությունը նույնիսկ հատուկ դեսպանություն ուղարկեց Ֆրանսիա, Իսպանիա և Իտալիա, վորպեսզի Լեհաստանի համար դաշնակիցներ վորոնի Թյուրքիայի

---

[1] Հարավային և Արևմտյան Ռուսաստանի ակտերը, XI հ., եջ 787—789.

հետ մղած նրա կռվում, վորը հովանավորում եր աջափնյա ավա-գանու՝ անկախության համար մղած կռիվը։

Հարյուրամյակի վերջում Ուկրաինան նվաճված եր։ Ավագա-նին սկսեց հաստատել իր դասակարգային գերիշխանությունը ճորտատիրական Մոսկվայի ու Լեհաստանի հովանավորությամբ։ Անցավ մոտ մի հարյուրամյակ ելն և Ուկրաինան կորցրեց իր քա-ղաքական ինքնուրույնության վերջին մնացորդները։

6

Խորհրդային, մարքսիստական պատմագրությունը մինչև այժմ չի տվել վերև քննարկված հարցերի ծավալուն հետազո-տություն։ Սրա պատճառը նրա մեջ մինչև այժմ գերիշխող Մ. Ն. Պոկրովսկու շկոլայի ընդհանուր մոթոդոլոգիական դրույթներն են, վորոնք այս հարցում ևս գերի են մնացել սոցիոլոգիական սխե-մատիզմին ու մտտեսական մատերիալիզմին, իսկ յերբեմն էլ ուղ-ղակի գերի են մնացել այն բուրժուական սխեմաներին, վորոնց դեմ նա պայքար եր մղում։

Արդեն հենց այն բնորոշումը, վոր Մ. Ն. Պոկրովսկին տալիս է Ուկրաինայի XVII դարի շարժմանը՝ «կազակային հեղափոխու-թյուն», արմատապես սխալ է։ Չնայած կազակության մեջ յեղած հակասությունների վերաբերյալ մի ամբողջ շարք ճիշտ ցուցում-ներին, վերջինս Մ. Ն. Պոկրովսկու պատկերացումով հանդես և գալիս իբրև միատեսակ ուժ, ուստի և յուրահատուկ գաղափար է ստեղծվում շարժման «միդասակարգության» վերաբերյալ։ Այս դեպքում ըստ Պոկրովսկու ստացվում է, վոր կազակը «մանր հո-ղագործ է, վորը շատ է հիշեցնում այն ժամանակվա ծայրագա-վառային կալվածատիրոջը», Մոսկվայի պետության մանր ծա-ռայող մարդու հարազատ յեղբայրը. միևնույն ժամանակ այս կազակ-հողատերը պատկերացվում է իբրև խորթ ամեն մի ֆեո-դալական շահագործման և հայտարարվում է «կազակային բուր-ժուազիա»։ Այսպիսի սոցիալական բնութագիր տալով կազակու-թյանը, Պոկրովսկին դրանով իսկ հանում եր XVII դարի դասա-կարգային պայքարում քաղաքի և մեշչանության ունեցած դերի հարցը։

Սրանից բղխում եր նաև լեհական գերիշխանության դեմ Ուկրաինայի մղած պայքարի հետագա՝ Պոկրովսկու տեսական կոնցեպցիայի համար տիպիկ ըմբռնումը։ Պարզվում է, վոր լեհա-կան ինտերվենցիան և ավագանի-շլյախտայի բլոկի պայքարը

միայն ներկայացնում էին հնագույն «նատուրալիստական ֆեոդալիզմի» վերացման յերկու տարբեր յեղանակները՝ այսինքն ակներև և ֆեոդալիզմի վերացումը նոր բուրժուական հարաբերություններով, և հարցը վերաբերում է այս վերացման ուղիներին միայն։ Այս պատճառով Պոկրովսկու սխեմայի մեջ իբրև լեհական գերիշխանության իսկական հակամարտ ուժ դուրս է գալիս ուկրայնական մագնատը, և ըստ էության ավագանի-շլյախտայի այս գերիշխանության դեմ մղած պայքարը մնում է չբացատրված։ Նրա մոտ չկա լեհական գերիշխանության դեմ մղված ազգային պայքարի դասակարգային հիմքի բացատրությունը, չկա նաև ազգային պայքարն իբրև ինքնուրույն պատմական պրոբլեմ։

Այս պատճառով Մ. Ն. Պոկրովսկին չկարողացավ տալ նաև յերրորդ պրոբլեմի՝ Մոսկվայի ինտերվենցիայի և Ուկրայնայի բաժանման հարցի ճիշտ լուծումը, վորովհետև այս հարցը նա լուծում է արևելյան Յեվրոպայում պետության գոյացման պրոցեսի վերաբերյալ ամբողջ հարցից դուրս, ինչպես այն դրել է ընկեր Ստալինը։ Ուկրայնայի կողմից ամեն ինչ սպասվում է Մոսկվայի հետ դաշինք կնքելու «քաղաքական անհրաժեշտությունը կապակցության համար» ֆորմուլայով և այս ֆորմուլայի հետև անհայտանում է ազգային կռիվը։ Իսկ Մոսկվան պատկերացվում էր իբրև այս միացմանը պասսիվորեն սպասող, այսինքն ընկնում էր քաղաքականապես «ավելի զարգացած ազգի» բուն պայքարը «պակաս զարգացած ազգի» հպատակեցման համար (ՍՏԱԼԻՆ)։ Այս սխեմայում իսկական բացատրություն չեն տացել վոչ Ուկրայնային տիրապետելու համար Մոսկվայի պայքարի ամբողջ բարդությունը, վոչ էլ Ուկրայնայի հետագա ռուս-լեհական բաժանումը։

Մ. Ն. Պոկրովսկու աշակերտների մտցրած ուղղումները մնում էին նույն պայմանական սխեմատիզմի շրջանակներում։ Նրանք կապակային հեղափոխությունը սոսկ փոխարինեցին գյուղացիական հեղափոխությամբ։[1] Չխոսելով հենց այն ձևակերպման սխալ լինելու մասին, վոր գյուղացիական տարերային շարժումը պատկերացնում է իբրև հեղափոխություն, այս սխեման շարժման ամբողջ բովանդակությունը հանգեցնում էր այս շարժման մի տար-

---

[1] Տես Տոմսինսկու գիրքը՝ «Ֆեոդալական-ճորտատիրական Ռուսաստանի գյուղացիական պատերազմները», Ժուռգազ, Մ. 1932.

բին։ Գյուղացիական պատերազմի մեջ Խմելնիցկուն և նրա ներկայացրած ավագանի-շլյախտային մեշչանական բլոկին թողնվում եր կամ գյուղացիության դեմ կռվելու ուղղակի հակահեղափոխական դեր, կամ գյուղացիական շարժման առաջնորդի դերը, վորը դավաճանել և այս շարժման, այսինքն անհասկանալի յե մնում Ուկրաինայի XVII դարի դասակարգային և ազգային կռվի ամբողջ բարդ հյուսվածքը։

Մարքսիստական պատմագրության խնդիրն և Համկ(բ)կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ դասագրքերի վերաբերյալ վերջին ցուցումների համապատասխան հաղթահարել սոցիոլոգիական այս սխեմատիզմն ու հակապատմական պարզացումն իսկական մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա։

(„Борба Класов“, № 4, *Ապրիլ, 1936։*)

394

Пров. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032859

(224)

1 2

II
32859

ԳԻՆՆ Ե 70 ԿՈՊ.